

ՊԱՐՍՎԱԿԱՆ ԱԶԳԱՆՈՒՆԵՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՅԵՐ

Օ. Ա. ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ

Իրանում անձի անվանման պաշտոնական ձևն անուն ու ազգանունն է¹: Օրինակ՝ Իրան, Մոհամմադիենեժադ, Բահրամ Էթաթչի, Ղոյամհոսեյն Քահերյան, Սանդ Քարիմի, Հոսեյն Ռեզազադե, Փարվիզ Գորգանիենեժադ, Մոհամմադ Էսֆանահի, Մա'սումե Խանդան, Ղասեմ Բանֆֆաշ, Ռեզա Էհսանիփուր, Ջանվադ ֆուլադի² և այլն:

Պարսից հասարակության մեջ ժամանակակից ազգանուններն առաջացել և կազմավորվել են 19-րդ դարավերջին և 20-րդ դարի սկզբներին, երբ զարգանում էին առևտրական կապերն ու տնտեսական հարաբերություններն արևմտյան երկրների հետ, և պահանջվում էր անհատի ինքնությունը հաստատող անձնական վկայական: Անձի պաշտոնական անվանման հարցը ստանում է համապետական նշանակություն: Բնական է, ազգանունների ձևավորումը զանգվածային բնույթ չի կրել, սակայն այս շրջանից էլ սկսվում է ազգանունների գրանցումը, և պարսիկները ստանում են եվրոպական տիպի անձնական վկայական³: Այսպիսով Իրանում երևան է զպիս ազգանունը իբրև մարդանվանման բանաձևի երկրորդ քաղաղրիչ, և անձը սկսում է պաշտոնապես կոչվել անուն-ազգանունով:

Իբրև ազգանուն նախկինում օգտագործվել և տարածված են եղել անձնանվանական, ազգանվանատիպ բազմազան ձևեր⁴, տարբեր եղանակներ:

Սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչներ անվանվել են հոր կամ պապի անունով⁵, երբեմն էլ նախնիների կամ հենց իրենց զբաղմունքի մասնագիտության հետ կապվող արտաքին կամ ներքին առանձնահատկություններ արտահայտող մականուններով⁶: Հաճախ նրանք կոչվել են նաև ըստ ծննդավայրի և բնակավայրի կամ էլ ըստ այս կամ այն տիտղոսի և այլն: Օրինակ՝ Հոսեյն Էթե Ազն, Էթրահիմ Խանյամ, Ղասեմ Նոդրեթար, Հաշեմ Բանչալ, Սադեղ Ռանջուր, Համիդ Ռասթգո, Փարվիզ Բադիա, Ջանջիդ Մուրի, Ֆերեյդուն Էսֆանահի, Հաջի Մոհամմադհոսեյն Մոանվեհեթթոջթար, Յանհյախան Մոշիրոդդոսդե և այլն:

Անվանման նշված ձևերում հանդիպող անձնանուն, մականուն (զբաղմունքի անուն, արտաքին կամ ներքին առանձնահատկություններ) բաղադրիչները հետագայում հիմք են դարձել պարսկական ազգանունների ձևավորման համար:

Ժամանակակից Իրանում բավական թվով ազգանուններ կազմված են անձնանուններից: Այս խմբի մեջ մտնող ազգանուններում որոշակիորեն արտացոլվել է անվանադրության քաղաքականությունը, նրա մուսուլմանական ավանդույթը:

Ինչպես հայտնի է, իսլամ ընդունելուց հետո Իրանում մեծ փոփոխություններ տեղի

¹ Հրատարակչական և տեխնիկական դժվարությունների պատճառով պարսկական նյութը տրվում է հայկական տառադարձությամբ: Նույն պատճառով ան-ի փոխարեն օգտագործում ենք Ա:

² Պարսկական նյութը հավաքված է մամուլից՝ «Էթթեխաթ» և «Ջեյհան» թերթերից:

³ «Ջեյհան» ազնրի 27, 1954 (ըստ պարս. տոմարի), էջ 5:

⁴ Այս մասին տե՛ս Օ. Ա. Арзуманян, Персидские фамилии, образованные от географических названий. «Страны и народы ближнего и среднего востока», т. XI, Иран. Ереван, 1962, էջ 283—292:

⁵ Ջանվադ Սանֆիենեժադ, Քալեբարադ, էջ 496:

⁶ Ջանվադ Սանֆիենեժադ, նույն տեղում, Դայերաթուլմաարեֆե թամադդունե Իրան, Սիլահաթթանմենե Օարդեհե, թարգմանել Մոհամմադ Աբրահիմ, ջեդդե չահարում, 1936 (ըստ պարսկ. տոմարի), էջ 178:

ունեցան: Մահեղականները պայքար սկսեցին իրանական ազգային մշակույթի դեմ: Ազիր-վուս էին գրառաշտական տաճարները, հեթանոսական հուշարձանները, ոչնչացվում էր գրականությունը, և այն ամենը, ինչ իրանական էր: Իսլամը մուտք էր գործում ամենուր: Եվ վերջապես մահմեդականությունն իր արտացոլումը գտավ նաև պարսիկների անձնա-նունների մեջ: Պարսիկ նորադավան պետական պաշտոնյաների զգալի մասը սկսեց կրել արաբական անուններ: Հետզհետե մահմեդական ընտանիքներում նորածնի անվանումը արաբական անունով ավելի լայն տարածում ստացավ:

Պարսիկ շիաների համոզմունքով երեխայի անունն է որոշում նրա հետագա ճակատագիրը⁷: Սրանով էլ պայմանավորված է մահմեդական պարսիկների ավանդույթը՝ նորածնին անվանել «եղեցիկ» անունով: Գեղեցիկի էսթետիկական չափանիշները նախապես սահմանափակված էին նախապաշարմունքով և հավատով:

«Գեղեցիկ» անուններ էին համարվում Մոհամմադ, Ալի, Հասան, Հոսեյն, Ռեզա և այլն⁸: Հավատացյալ ծնողները համոզված էին, որ իրենց զավակները հանդերձյալ կլան-քում՝ ահեղ դատաստանի օրը, օգտվելու են իրենց անունը կրող իմամի հովանավորու-թյունից⁹: Այս շրջանում պարսիկ շիա հոգևորականության ջանքերով հետզհետե արաբա-կան բոլոր անունները, որոշ բացառությամբ, անցան պարսից լեզվին: Նրանք իրենց կազ-մությամբ բավականին բազմազան են և հեշտությամբ առանձնանում են բուն պարսկա-կան անձնանուններից:

Արաբական ծագում ունեցող անձնանուններն այլահի, մարգարեի, իմամների և նրանց հարազատների անուններն ու մակիրիներն են: Բարդ անձնանուններն առավելապես կազ-մված են Մահմեդ մարգարեի և առաջին իմամ Ալիի անուններից: Օրինակ՝ Մոհամմա-դանի, Մոհամմադհոսեյն, Ալիաբբաս, Ալիռեզա, Մոհամմադռեզա և այլն: Այսպիսով Իրա-նում անձի անվանումը սկսեց կրել կրոնական բնույթ, և անձնանուններն իրենց ճնշող մեծամասնությամբ դարձան արաբական: Սակայն նախախլամական՝ իրանական, այդ թվում նաև բնիկ պարսկական անձնանունները չանհետացան, այլ հիմնականում պահ-պանվեցին գրառաշտականների մոտ¹⁰: Օրինակ՝ Հորմուզ, Ֆիրուզ, Փնրվիզ, Ֆերեյդուն, Շափուր, Ջամշիդ, Բահրամ, Մոհրաբ, Բաբաս և այլն:

Հետագա դարերում ազգային տրամադրություններով ստորված մահմեդական պար-սիկները՝ հատկապես ազնվականությունն ու մտավորականությունը, սկսեցին իրենց զա-վակներին անվանել նախախլամական Իրանի բնիկ պարսկական անուններով: Այս առ-թով պարսիկ գրող Ջամալզադեն, խոսելով իր հերոսներից մեկի մասին, նշել է, որ նա հոր հիշատակին ավագ որդուն անվանել է Էնայաս, իսկ կրտսերին՝ Միլամաս հին պարս-կական անունով, քանի որ նա ծնվել էր ազգային վերածնության և զարթոնքի տարի-ներին¹¹:

Այսպիսով մահմեդական պարսիկների անձնանունների ցանկում սկսեցին որոշակի տեղ գրավել նաև հին պարսկական անձնանունները:

Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ պարսկական ժամանակակից ազգանուններն իրենց մեջ ներառել են պարսիկների անձնանունների ամբողջ համակարգը:

Անձնանուններից կազմված ազգանուններն, ըստ երևույթին, նպատակ ունեն ընդգը-ծելու ընտանիքի հոր անունը: Պարսկական հասարակությունը հնուց եղել է հայրիշխանա-կան: Պարսիկ մահմեդականներն ավանդապահ են: Նրանց մոտ ընդունված սովորույթ և կարգ է զավակներին գրանցել տղամարդու՝ հոր անունով: Այդ պատճառով էլ ազգանուն-ների հիմք են դարձել արական անձնանունները՝ հայրանուն, պապանուն և ոչ թե իգա-կան անունները՝ մայրանուն: Հետևաբար ներկայումս, որոշ բացառությամբ, անձնանուններից կազմված ազգանունները հայրանվանական են:

Իգական անձնանունից ազգանուն կազմելը խորթ է պարսից հասարակության մտա-ծելակերպին, հոգեբանությանը: Ըստ երևույթին դա պետք է բացատրել Արևելքում, այդ թվում նաև Իրանում, կնոջ սոցիալական իրավազուրկ վիճակով: Կինը զրկված է եղել ժա-նանգական իրավունքից: Հետևաբար ազգանունը, իբրև ժառանգաբար անցնող ընտանե-կան անվանում, իգական անձնանուններից չի կազմվել: Ժառանգներ համարվել են արա-կան սեռի ներկայացուցիչները: Սակայն ավելորդ չենք համարում նշել, որ հանդիպում

⁷ Տե՛ս Խանջե Նասրեդդին Քուսի, Քեթաբե մոսթաթաբե ախլադե Նասերի, Էնհրան, էջ 182:

⁸ Տե՛ս Մահմուդ Քասիրադի, Ազ խեշթ թա խեշթ, Թեհրան, էջ 57:

⁹ Տե՛ս նույն տեղը:

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

¹¹ Տե՛ս Սեյեդ Մոհամմադանի Ջամալզադե, Թալիս 0 շիրին, Թեհրան, 1934 (ըստ պարսկ. տոմարի), էջ 142:

են խիստ սակավաթիվ ազգանուններ, որոնք այնուամենայնիվ կազմված են իգական անձնանուններից՝ **Ռեզա Փարվիհիզադե, Զանլա Փարվիհի, Զանժիդ Սորնյա, Հուսեյն Մեհ-րեզադե, Հուսեյն Փարվիհիհյա, Իրանջ Թիրիմփուր, Մանիհե Հոմայիփուր, Ճարհադ Ծահ-նազ, Մինա Ղոդսիզադե, Վալի Մեհրբանու:** Հիշյալ ազգանունները քիչ գործածական են: Արձանագրված են մեկական օրինակ:

Հայրանունը պարսիկների համար եղել է ընտանեկան անուն, որը ժառանգաբար անց-նելով հաջորդ սերնդին՝ դարձել է ազգանուն: Այսպիսով հայրանվան հիմքի վրա երևան է եկել հայրանվանական ազգանուն: Բնական է, հոր հայրանունը, ժառանգաբար անց-նելով երկրորդ սերնդին, նրա համար դարձել է պապանուն: Եվ երբեմնի ընտանիքի հոր անունը անցնելով սերնդետերունդ՝ դարձել է ժառանգական:

Հայրանվանական ազգանունը ոչ միայն անհատին անվանում է հոր անունով, այլև ցույց է տալիս նրա պատկանելությունը տվյալ ընտանիքին:

Ազգանունների մեծ մասը կազմված է այնպիսի բառերից, որոնք արտահայտում են անձի պատկանելությունն այս կամ այն ընտանիքին, նրա այս կամ այն գերդաստանից սերված լինելը: Ուստի ազգանունները կազմված են ձևաբանական այնպիսի միջոցներով, որոնք արտահայտում են պատկանելություն, սերում և ծագում:

Հայրանվանական ազգանունների կազմության ձևերը բազմազան են: Նրանք ձև-վորվում են գլխավորապես ածանցներով, ձևույթներով և ձևաբանական այլ միջոցներով, որոնք հանդես են գալիս իրեն ազգանունների բաղադրիչներ:

Սակայն մեր օրերում պարսկական ազգանունների մի մեծ խումբ, այդ թվում նաև հայրանվանական ազգանունների մի մասը, գործածվում է առանց ազգանվանակերտ ա-ծանցների, ձևույթների, առանց ձևաբանական այլ միջոցների: Պարզապես անձնանունն իր ուղիղ ձևով գործածվում է իբր ազգանուն: Օրինակ՝ **Բեհզադ Հաշեմ, Աբեֆե Հանիմ, Ղալամեզա Հանրամալի, Զոհրա Ռանիմ, Ճանիմե Հասանալի, Իրանջ Հոմայուն, Հասան Սիլամաք, Մոհամմադ Համիդ, Ազար Իրանջ, Ճարգանե Հոմայուն, Փարվանե Զան-հանգիր, Նազի Ֆերեյդուն** և այլն:

Ծառ տարածված հայրանվանական ազգանունների թվին են պատկանում այն ազ-գանունները, որոնք ձևավորված են Ի (այն ներառյալ) ածանցի օգնությամբ: Արդի պարս-կերենում հիշյալ ածանցը հանդես է գալիս որպես բառակազմական ածանց, դրվում է մի շարք գոյականների վրա և կազմում հարաբերական ածականներ¹², ինչպես՝ չուրի, ահանի, քուրի և այլն: Սակայն Ի ածանցը ունի նաև բառակազմական տարբեր նշանա-կություններ: Դրվելով անձնանունների վրա Ի ածանցը արտահայտում է անձի ծագումը, նրա տվյալ ընտանիքից սերված լինելը¹³: Օրինակ՝ **Ռեզա Զանֆանի, Ղասեմ Հաշեմի, Զիբա Հուսեյնի, Նասեր Զանժիդի, Ֆերեյդուն Բանրամի, Հոմա Փարվիզի, Լեյլա Նասերի, Զավադ Հուլանգի, Ռեզա Մանուչեհրի:**

Անձնանուն + Ի ածանց կաղապարով կազմված հայրանվանական ազգանունները շատ տարածված են: Ի ածանցով ազգանուններ են կազմվում տարբեր ծագում և կազ-մություն ունեցող արական անձնանուններից՝ **Մանուչեհրի, Բանրամի, Իրանջի, Վանիդի, Նադերի, Մոհամմադհոսեյնի, Էլչոնրի, Զանֆանի, Նասերի, Նադերի, Զանժիդի** և այլն: Պարսկական ազգանունների ձևավորման համար Ի ածանցը ամենաարգասավորն է: Նրա Եզանությամբ ձևավորվում են նաև պարսկական այլ տիպի ազգանուններ: Օրինակ՝ **Քեհրանի, Քաշանի, Քաղանգի, Ճանրժի, Արյայի, Քաշիքի** և այլն:

Արդի պարսկերենում Եզված հայրանվանական ազգանունները կարող են ձևավորվել նաև ԱՆ մասնիկով:

Օրինակ՝ **Մանուչեհր(ի)յան, Սադեղ(ի)յան, Ռանիմ(ի)յան, Ֆիրուզ(ի)յան, Ֆերեյդու-ն(ի)յան, Հանրիմ(ի)յան, Զանֆան(ի)յան, Բանրամ(ի)յան, Ղոթաղ(ի)յան, Ծափուր(ի)-յան, Ճարհադ(ի)յան, Համիդ(ի)յան, Քելդորաղ(ի)յան, Ռանժիդ(ի)յան, Մանսուր(ի)յան** և այլն:

Ինչպես հայտնի է, պարսից լեզվում ամենատարածված հոգնակիակերտ մասնիկներն են ԱՆ և ՀԱ ձևույթները: Բերված օրինակներից երևում է, որ հայրանվանական ազգա-նուններ կազմելու համար Եզված հոգնակիակերտ մասնիկներից միակ արգասավորը ԱՆ մասնիկն է: ՀԱ հոգնակիակերտ մասնիկով կազմություններ չեն հանդիպում: Այդ, ըստ երևույթին, պետք է բացատրել նրանով, որ պարսկերենում շնչավոր առարկաների հոգ-նակի թիվը հիմնականում կազմվում է ԱՆ մասնիկով:

¹² Արորանհիս Հոմայունֆարրոխ, Դասթուրե ջամեհե գաբանե ֆարսի, հանֆո ջելդ դար եք մոջալլան, չափե դովում, էջ 248:

¹³ S. C. Расторгуева, Краткий очерк грамматики персидского языка. Пер-сидско-русский словарь, М., 1953, էջ 663:

Այս խմբի մեջ մտնող ազգանունների համար իբրև առանձնահատկություն պետք է նշել, որ ԱՆ մասնիկով ազգանուններ ձևավորվում են միայն անձնանուն + Ի ածանց (Հոսեյն + Ի = Հոսեյնի) կազմություններից, ինչպես՝ Քանալ(ի)յան (Քանալ + Ի = Քանալի), Ռանշիդ(ի)յան (Ռանշիդ + Ի = Ռանշիդի), Սանդի(ի)յան (Սանդի + Ի = Սանդիի), Քազեմ(ի)յան (Քազեմ + Ի = Քազեմի), Սոհրաբ(ի)յան (Սոհրաբ + Ի = Սոհրաբի) և այլն:

Հոգնակիակերտ մասնիկով կազմված ազգանուններն արտահայտում են տվյալ գերդաստանին, ընտանիքին պատկանելը¹⁴: Նշված ազգանուններում նկատի է առնվում ընտանիքի կոնկրետ անձը և ոչ թե ընտանիքն ամբողջությամբ¹⁵, ինչպես՝ Ճաթեմե Քանրիմ(ի)յան, Մեհդի Ջավադ(ի)յան, Փարվին Մանուչեհր(ի)յան, Քանի Մանուղ(ի)յան և այլն:

Անձնանուն + Ի ածանց + ԱՆ մասնիկ կազմություններում մեք ունենք երկու ձևույթների համատեղ գործածություն:

Բացի վերը նշված ազգանուններից, անձնանվան հիմքի վրա ձևավորվում են նաև ազգանվան բազմազան այլ խմբեր: Դրանք ազգանվան այնպիսի կազմություններ են, որոնք ձևավորվում են բառաբարդությամբ:

Մեր օրերում շատ տարածված են ազգանվան այնպիսի կազմություններ, որոնք ձևավորված են անձնանուն + ՋԱԿԵ բաղադրիչով, ինչպես՝ Յուսեֆադե, Քանդիզադե, Հոսեյնադե, Սանֆիզադե, Ռանհիմադե, Ղասեմադե, Ռեզազադե և այլն: ՋԱԿԵ-ն զադան «ծնել» բայի անցյալ դերբայն է: Նշանակում է երեխա՝ ձագ, զավակ, որդի:

ՋԱԿԵ անցյալ դերբայը արդի պարսկերենում որպես բառաբարդության բաղադրիչ կենսունակություն չի ստացել: Այն որոշ բացառությամբ որպես ազգանունակերտ ածանց հանդես է գալիս գլխավորապես միայն նշված կազմություններում: Տարածված ազգանուններից են ՋԱԿԵ անցյալ դերբայով կազմված ազգանվան զուգահեռ ձևերը: Ունենք նաև անձնանուն + Ի ածանց¹⁶ ՋԱԿԵ կազմությունները: Ինչպես օրինակ՝ Ազանր + Ի + ՋԱԿԵ = Ազանրադե, Ազանրադե, Քազեմիզադե (Քազեմ + Ի + ՋԱԿԵ = Քազեմիզադե), Հուշանգիզադե (Հուշանգ + Ի + ՋԱԿԵ = Հուշանգիզադե), Հոսեյնիզադե (Հոսեյն + Ի + ՋԱԿԵ = Հոսեյնիզադե) և այլն: Վերոհիշյալ և նմանօրինակ կազմությունները, ինչպես՝ Ճանրադադե և Ճանրադիզադե, կարելի է համարել նույն ազգանվան երկու տարբերակներ, թեև ածական անձնանուն + ՋԱԿԵ կազմության մեջ ընդգծված է նաև հոր հայրանունը, այսինքն՝ պապանունը:

Հանդիպում է նաև ՋԱԿԵ բաղադրիչի ՋԱԿ կրճատված տարբերակը: Դրանցից են Քահերադա, Ջավադադա, Ռանհիմադա, Հոսեյնադա և այլն: Արդի պարսից լեզվում ազգանուններ կերտելիս ավելի գործածական է ՋԱԿԵ անցյալ դերբայը, քան նրա ՋԱԿ կրճատված տարբերակը:

Թեև ՋԱԿԵ անցյալ դերբայի օգնությամբ ազգանուններ կազմվում են մեծ մասամբ անձնանուններից, սակայն կան նաև այլ տիպի ազգանուններ, որոնց ձևավորման համար նույնպես օգտագործվում է ՋԱԿԵ անցյալ դերբայը: Ինչպես՝ Քաշանգադե, Գորգանիզադե, Քանրիզադե, Քանֆաշադե, Քանրասիզադե, Քանդիտազադե, Ղայիզադե, Ծիրզադե, Սանրանգադե և այլն:

Ինչպես երևում է բերված օրինակներից, անցյալ դերբայը նշված ազգանուններում պահպանել է իր բառային հիմնական բովանդակությունը:

Սակայն պետք է նշել, որ ժամանակակից պարսկերենում բառիմաստի նեղացման հետևանքով ՋԱԿԵ անցյալ դերբայը մի շարք կազմություններում իմաստի մթազում է ապրել և սկսում է գիտակցվել սուկ որպես ազգանունակերտ ածանց:

Դրա լավագույն վկայությունն է այն, որ ՋԱԿԵ ածանցով ազգանուններ են ձևավորվել նաև տարբեր անուններից և խոչընդոտաչին այլ իմաստներ ունեցող բառերից, ինչպես՝ Դանեշադե, Մոթլանդադե, Մոթթանդիզադե և այլն:

Նշված օրինակներում ՋԱԿԵ անցյալ դերբայը ազգանունակերտ ածանցի նշանակություն ունի, և նրանով ածանցված բառերը նշանակում են ազգանուններ:

Անձնանվան հիմքի վրա ձևավորված պարսկական բարդ ազգանունների մի մասը կազմվում է ՓՈՒՐ «որդի» բաղադրիչի օգնությամբ՝ Նադերփոր, Սադեղփոր, Հեյդանփոր, Հաշեմփոր և այլն:

ՓՈՒՐ բաղադրիչով ձևավորված ազգանուններում առանձնանուն են կառուցվածքային երկու տարբերակներ: Մի դեպքում ունենք անձնանուն + ՓՈՒՐ, մյուս դեպքում՝ ՓՈՒՐ + անձնանուն կազմությունները: Օրինակ՝

¹⁴ Տե՛ս Ա. Բ. Суперанская, Структура имени собственного, М., 1969, էջ 77:

¹⁵ Տե՛ս Ա. Բ. Суперанская, Общая теория имени собственного, М., 1973, էջ 178:

¹⁶ Անձնանուն գումարած Ի կազմությունը այսուհետև անվանելու ենք ածական անձնանուն:

Փուրճանամ	Հասանփուր
Փուրխալիլ	Իրանփուր
Փուրսանմամ	Գոշքասրփուր
Փուրանմանդ	Մանուրփուր
Փուրանհրամ	Հոսեյնփուր
Փուրհադի	Մոհսեփուր
Փուրժեխթար	Սանմանփուր
Փուրջանվադ	Մանուրփուր
Փուրթանգի	Նադերփուր

Նման կազմությունները, ըստ երևույթին, պետք է համարել նույն ազգանվան երկու տարբերակներ:

Ինչպես վկայում է փաստական նյութը, ավելի գործածական է նշված ազգանունների այն ձևը, երբ բաղադրիչը հանդես է գալիս հետադաս դիրքում՝ **Մանմուրփուր**, **Քազեմփուր**, **Ղոբադփուր**, **Ճանրոխփուր**, **Նասերփուր**, **Սոլեյմանփուր** և այլն:

ՓՈՒՐ բաղադրիչով ձևավորված ազգանունների շարքում հանդիպում են նաև այնպիսի կազմություններ, որոնց համար հիմք են դարձել ածական անձնանունները (անձնանուն + Ի): Ինչպես՝ **Հոսեյնփուր**, **Սադեղիփուր**, **Գուրդարփուր**, **Մանուշեհրիփուր**, **Ռամիմիփուր** և այլն: Ածական անձնանուն + **ՓՈՒՐ** կազմություններում ևս հիշվում է Ռոբ հայրանունը՝ պարսպանունը:

Նշված ազգանունները նույնպես ունեն կառուցվածքային երկու տարբերակներ: **ՓՈՒՐ** բաղադրիչը հանդես է գալիս ինչպես նախադաս, այնպես էլ՝ հետադաս դիրքում: Օրինակ՝

Ռանջիփուր	Փուրբարիմի
Ղանֆարիփուր	Փուրթանմասքի
Հաշեմիփուր	Փուրոնիմի
Ճերեյունիփուր	Փուրնադերի
Հորմուզփուր	Փուրֆարհադի
Նադերիփուր	Փուրոսեյնի

ՓՈՒՐ բաղադրիչով կազմված ազգանունները կարող են ձևավորված լինել նաև **ԱՆ** մասնիկով՝ **Հեյդար(ի)յանփուր**, **Բանհրամ(ի)յանփուր**, **Ահման(ի)յանփուր** և այլն:

ԱՆ մասնիկը, ինչպես արդեն նշվել է, անձնանվանական ազգանուններում հանդես է գալիս ոչ թե հոգնակիացնող, այլ որոշակիացնող նշանակությամբ: Բերված օրինակները ցույց են տալիս, որ ազգանվան այս կաղապարը ձևավորվել է ածական անձնանուն + **ԱՆ** մասնիկ + **ՓՈՒՐ** գոյականի օգնությամբ:

Քիչ թվով ազգանուններ չեն ստեղծվել նաև **ՆեծԱՆ** «տոհմ, ծագում, սերուն» բաղադրիչի օգնությամբ՝ **Խոսրոունեծադ**, **Սադեղնեծադ**, **Քանդինեծադ**, **Մոհամմանդնեծադ**, **Վալինեծադ**, **Հեյդարնեծադ**, **Հաշեմնեծադ**, **Ռանջինեծադ**, **Դարյուշնեծադ**, **Քազեմնեծադ**, **Ճանրադնեծադ** և այլն:

Անձնանուն + **ՆեծԱՆ** կազմությունը ուշագրավ է նաև այն իմաստով, որ ազգանունների այս շարքում վկայված է գերդաստանի անունը, որից սերում է տվյալ անձը:

ՆեծԱՆ բաղադրիչով ձևավորված ազգանուններում հանդիպում են կազմության երկու տարբերակներ: Ազգանունների մի տարբերակը կազմվում է անձնանուն + **ՆեծԱՆ** կաղապարով՝ **Հոսեյն** + **ՆեծԱՆ** = **Հոսեյննեծադ**, իսկ երկրորդ տարբերակը ձևավորվում է ածական անձնանվան հիմքի վրա՝ ածական անձնանուն + **ՆեծԱՆ**: Ահա մի քանի օրինակ՝ **Հոսեյնինեծադ**, **Ջանվադինեծադ**, **Քարիմինեծադ**, **Մանուդինեծադ**, **Իրանջինեծադ**, **Բանհրամինեծադ**, **Գոշքասրինեծադ** և այլն:

Նշված ազգանունների երկու տարբերակներում էլ **ՆեծԱՆ** բաղադրիչը միշտ գտնվում է հետադաս դիրքում:

Բավականին թվով բարդ ազգանուններում գերդաստանի անունը նշելու համար օգտագործվում է **ՆԱՍԱԲ** «ազգություն, ծագում» բաղադրիչը: Ազգանունների այս խումբը ևս ունի երկու դրսևորում: Մի դեպքում՝ անձնանուն + **ՆԱՍԱԲ**, ինչպես՝ **Մուսանֆանասան**, **Մոհամմանդանիմասան** **Հեյդարնասան**, **Ճիրուզնասան**, **Հաշեմնասան**, **Ղանսեմնասան**, մյուս դեպքում՝ ածական անձնանուն + **ՆԱՍԱԲ**: Օրինակ՝ **Հանրիմնասան**, **Բանհրամնասան**, **Ռանջիննասան** և այլն: Այս կազմություններում **ՆԱՍԱԲ** բաղադրիչը միշտ հետադաս է լինում:

Բարդ ազգանունների շարքում հանդիպում են նաև **ՔԱՐԱՐ** «ծագում, սերուն, տոհմ, ցեղ, գերդաստան» բաղադրիչով ձևավորված ազգանուններ՝ **Խոսրոտարանքար**, **Ճանրոխարանքար**, **Սանդրանքար** և այլն:

ՔԱՐԱՐ բաղադրիչով կազմված ազգանունները ևս ունեն կառուցվածքային երկու ձև՝ անձնանուն + **ՔԱՐԱՐ** և ածական անձնանուն + **ՔԱՐԱՐ**: **Բերենք** մի քանի օրինակ՝ **Յանրոկիքնաբար, Հոմայունիքնաբար, Մանուղիքնաբար, Ռանչիքնաբար, Հոսելիքնաբար, Յերեղունիքնաբար** և այլն:

Արդի պարսկերենում կան անձնանուններից կազմված նաև այնպիսի բարդ ազգանուններ, որոնք ձևավորված են **ՆԻՅԱ** «պապ, նախնի» բաղադրիչի օգնությամբ՝ **Բաղերհիյա, Մանուղհիյա, Քանրիմհիյա, Սանիղհիյա, Քանիղհիյա**:

ՆԻՅԱ բաղադրիչով ձևավորված ազգանուններում ևս առանձնանում են կառուցվածքային երկու տարբերակներ: Մի տարբերակում ունենք անձնանուն + **ՆԻՅԱ**, մյուսում՝ ածական անձնանուն + **ՆԻՅԱ** կազմությունները. ինչպես՝ **Վանիղհիյա, Սաղերհիյա, Ջանֆանրհիյա, Բանրամհիյա, Ալիհիյա, Ռանչիղհիյա, Ջանվաղիղհիյա, Մոհամմանիղհիյա, Ջանլիղիղհիյա, Քանրիմիղհիյա** և այլն: Նշված օրինակներում բաղադրիչը հանդես է գալիս հետադաս դիրքում: Սակայն մինչ այժմ հանդիպել է մեկ փաստ, երբ բարդ ազգանվան մեջ **ՆԻՅԱ** բաղադրիչը նախորդել է անձնանվանը՝ **Նիյաքամալ**:

Նկատվում են փոքր թվով բարդ ազգանուններ, որոնք ձևավորվում են **ՓԵՅ** «հետնորդ, հաջորդ, ժառանգորդ» բաղադրիչի օգնությամբ: Ինչպես վկայում է փաստական նյութը, **ՓԵՅ** բաղադրիչով կազմված ազգանունների համար հիմք են դարձել գլխավորապես բնիկ պարսկական ազգանունները՝ **Յանրոկպեղ, Յանրզիպեղ, Փիրուզպեղ, Դավանրփեղ, Սոհրաբպեղ** և այլն:

Անձնանուն + **ՓԵՅ** կաղապարով կազմված ազգանունները սակավաթիվ և քիչ գործածական են: Արաբական փոխառյալ անձնանուններով կազմություններ մեզ չեն հասնիպել:

Պարսկական ազգանունների շարքն են դասվել նաև այնպիսի կազմություններ, որոք ձևավորվել են **ՔԻՅԱ** «թագավոր, իշխան, արքա, տեր, տիրակալ» բաղադրիչով: Նկատի ունենալով **ՔԻՅԱ** բաղադրիչի իմաստը՝ նման ազգանունները ամենայն հավանականությամբ սկզբնապես կրել են իշխող խավերի և ազնվատոհմ ընտանիքների ներկայացուցիչները, իսկ հետագայում անձնանուն + **ՔԻՅԱ** կաղապարով կազմված ազգանունները տարածվել են նաև հասարակության մյուս խավերի վրա:

ՔԻՅԱ բաղադրիչով ձևավորված ազգանունները ևս ունեն կազմության երկու դրսեվորում: Մի դեպքում ունենք անձնանուն + **ՔԻՅԱ**, ինչպես՝ **Յելեղունքիյա, Սաղերիյա, Բանրամքիյա**, մյուս դեպքում ունենք ածական անձնանուն + **ՔԻՅԱ**, ինչպես՝ **Բաղերիքիյա, Հոսելիքիյա** և այլն: Ազգանվան երկու տարբերակում էլ **ՔԻՅԱ** բաղադրիչը հանդես է գալիս հետադաս դիրքում:

Այսպիսով, պարսից հասարակության մեջ երբեմնի ընտանիքի հոր անունը, անցնելով սերնդե-սերունդ, դարձել է ազգանուն: Հայրանվանական հիմքի վրա երևան է եկել ազգանունների մի մեծ խումբ, որն իր մեջ ներառել է պարսկական արական անձնանունների ամբողջ համակարգը: Հայրանվանական ազգանուններն իրենց կազմությամբ բազմազան են, որոնք ձևաբանական տարբեր միջոցներով արտահայտում են անձի պատկանելությունն այս կամ այն ընտանիքին, նրա այս կամ այն գերդաստանից սերված լինելը:

Օ. Ա. АРЗУМАНЯН—О некоторых вопросах образования персидских фамилий.— В Иране период образования и формирования современных фамилий относится к началу XX в., когда по ряду причин прежние способы наименования фамильного типа оказались негодными, а письменные удостоверения личности стали необходимостью.

Широко распространены фамилии, образованные от мужских личных имен. Они морфологически разнообразны, оформляются средствами языка, выражающими принадлежность лица к семье, к роду. Такими средствами являются различные морфемы, а также лексические единицы, выступающие в качестве компонента сложных фамилий со значением дядя, сын, потомок, род, потомство, происхождение и т. д.